ՄԱՀԳՈՅԺ

✠ *Աւետիս Ղուկասեան.*

«Լումալի» դեռ անցեալ համարում մենք գրուատում էինք հանրածանօթ հայ բարեգործ Աւետիս Ղուկասեանի «իր կենդանութեանը» կատարած առաքինի գործերը, և այսօր, երկու ամիս չբոլորած այն օրից, տխուր պարտականութիւն ունինք գուժել մեր ընթերցողներին այդ օրինակելի հայ բարեգործի և ճշմարիտ քրիստոնեայի անժամանակ մահը որ տեղի ունեցաւ ամսոյս 5-ին։ Ասում ենք անժամանակ, որովհետև նա չբաւականանալով իւր կենդանութեամբ կատարած բարի բարի գործերով, չբաւականանալով իւր մեծագումար կտակով, որի մանրամասնութիւնները մենք քաղուածօրէն առաջ ենք բերում սոյն համարում, դեռ, շատ բան ունէր կատարելու. և այսուհետև և իւր մահուան անկողնի մէջ անդամ մրմնջում էր իւր ապագայ գործունէութեան մասին։

Մեծ չէ հանգուցեալ Աւետիս Ղուկասեանի կենսագրութիւնը. նա ծնուել է 1837 թուին Շուշի քաղաքում, ուր և ստացել է իւր կրթութիւնը և աւարտել տեղի զաւառական դպրոցը, որից յետ նուիրել է իրան վաճառականութեան։ Նա ամուսնանում է Խունունց Յովհաննիսի դստեր Աննայի հետ և իւր եղբայրների հետ միասին սկսում է առևտրական գործով պարապել Մոսկուա, Նուխի, Ղուբա և Շուշի քաղաքներում, գլխաւորապէս արտահանելով տորոն, թել և ապա մանուֆակտուրային ապրանքներ, վերջինիս առևտուրը շարունակում է նաև Բագու, ուր ապա դադարացնելով այդ՝ նուիրում է իրան նաւթային գործերի, որպէս Գ. Արաքելեան և ընկ. բաժնետէր։

1892 թ. Աւետիսը վերջնականապէս դադարացրեց իւր առևտրական գործերը և տեղափոխուեց Բագուից Թիֆլիս, ուր Աստուած նորան պարգևեց մի դուստր։

Կենսագրութիւնը մեծ չէր, բայց մեծ են նորա կատարած գործերը։ — Նա մի խոշոր գումար տալով շինել է տուել Բագուի Մարդասիրական ընկերութեան յատնի բնակարանի վերնայարկի փառաւոր դահլիճը, ուր և գրուած է նորա լիշատակը։ Իսկ գլխաւոր բարեգործութիւնները նա կատարել է

Թիֆլիս տեղափոխուելուց յետոյ, Ցիշենք նոցանից յատնիները.

1896 թուին նա շինեց սրբատաշ քարից մի հոյակապ շինութիւն Սևանի վանքում, կահաւորելով իւր ծախքով։

Նոյն թուին նա գնեց հարիւրամեայ հայ լրագրութեան մի ժողովածու և նուիրեց ս. Էջմիածնի մատենադարանին։

Նոյն թուից սկսեց կառուցանել Թիֆլիսի վանքի մայր եկեղեցու գաւթում մի փոքրիկ, բայց հոյակապ շինութիւն կրօնական թանգարանի համար, որին կից ապա հիմնեց մի համակրելի գրական մրցանակ իւր անունով, որի մանրամասնութիւնները ժամանակին հաղորդել ենք «Լուսալի» ընթերցողներին։ Թանգարանին կից շինեց մի հոյակապ մուտքի դուռ դէպի Վանքի գաւիթը տանող և դեռ դիտաւորութիւն ունէր այդ դռնից մինչև զանգակատունը հոյակապ պարիսպ շինել սրբատաշքարից և վանդակաղարդ։

Նա օգնում էր աջ ու ձախ. ամեն հանգանակութեան

գլխաւոր մասնակցողներից մէկը Ա. Ղուկասեանն էր լինում, ոչ մի դիմող դատարկաձեռն չէր հեռանում նորանից, 5—6 թոշակաւոր շարունակ ուսանում էին և ուսանում են այսօր նորա ծախքով Թիֆլիս և Ռուսաստան։ Այս ամենը իւր կենդանութեամբ. իսկ մահից յետ թողեց մի կտակ, որ պարակում է նորա բոլոր գործերը և լաւիտեան պիտի անմահացնէ հանդուցեալի յիշատակը։

Հանդուցեալի թէ կենդանութեամբ և թէ կտակով արած բարեգործութիւնների գումարը հասնում է 200,000 ռուբլու. այնչափ գումարի կտակներ թերևս ուրիշներ ևս արել են, բայց մեզ համար առանձնապէս գին ունի Ա. Ղուկասեանի կտակը, որովհետև ուրիշները անշուշտ իրանց միլիոններից են արել իրանց բարեգործութիւնը, իսկ հանդուցեալը իւր չափաւոր կարողութիւնից։ Նորա բոլոր ունեցածը իւր կազմած վերջին հաշուով հասնում է մօտ 850 հազար ռուբլու, որից դուրս դալով տունը, կտակաւանդակ գումարները և կասկածելի ստանալիքները, մնում է իւր տիկնոջ մօտ 140,000 ռուբլու գումար և մի երեք այդքան էլ իւր եղբնամեայ դստեր, և այս ամենը թէ դրամով, թէ գոլքով և թէ դանազան առևտրական ձեռնարկութիւնների մէջ։

Աւետիս Ղուկասեանը, որին մենք մերձաւորը լինելու պատիւն ունէինք, բարի քրիստոնեայ մարդ էր, ընտանեսէր, չափաղանց ընթերցասէր և նորա տունը ներկայացնում էր հայկական հիւրասիրութեան մի կեդրոնավայր, ուր իբրև հայր Աբրահամու տանը խմբում էին և հիւրասիրւում անխտիր ամեն դասակարգի անձինք։ Նորա զգայուն սիրտը կարող է իբրև օրինակ ծառայել շատ մեծատունների համար։ Երբէք չենք կարող մոռանալ նորա խօսքերը ուղղած մեզ. «տէր հայր, ես գոհութիւն Աստուծոյ, լուսեան և առատութեան մէջ եմ և երբ բարեկամներով և սիրելիներով շրջապատուած սեղան եմ նստում՝ իսկոյն յիշում եմ, որ բազմաթիւ մարդիկ կան, որ այդ միջոցին ցամաք հաց չունին ուտելու և թիքան կուլ չէ գնում ինձ. ինձ շատ կպարտաւորացնէիք, որ դէթ տարուայ երկու մեծ տօներին ներկայացնէիք ինձ ձեր աղքատ ծխերի մի ցուցակ, դէպի որոնց կարողանալի ես իմ պարտքս կատարել»...

Աղգիս սրբազնագոյն Քահանայապետի կարդադրութեամբ հանգ. Ա. Ղուկասեանը ամենամեծ չուքով թաղուեց վանքի ա. եկեղեցու թանդարանի տակ. պատարագեց Սրբազան Գ. Սաթունեանը, պատարագի ժամանակ մի աղդու և դիւթիչ քարոզով դրուատեց հանդուցեալին Տ. Բինիկ վարդապետը, իսկ եկեղեցում կարդը կատարելիս հանդիսաղիր եղաւ ինքը վեհ. Հայրապետը։

Յաւիտենական հանդիստ ուսումնասէր բարերարի ոսկորներին։